Արձանագրություն N 2
ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով թղթի (A4 ֆորմատի /21x29.7/) ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01.03.2018 թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Ղուկասյան / գնահատող /
Շ. Իսախանյան /գնահատող/
Ս. Զաքոյան / բացող /
Գ. Խաչատրյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2018 թվականի մարտի 1-ին ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 1 573 000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	ք.Երևան, Վարդանանց 110	1 283 333.33	256 666.67	1 540 000
2	<<Լիմուշ>> ՍՊԸ	ք.Երևան, Քոչինյան 21/3	1 457 500	291 500	1 749 000

դ) Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշում է.

1. <<Լիմուշ>> ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքի նախահաշվային արժեքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	բավարար
-	<<Լիմուշ>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պատասխանները ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի մարտի 7-ը ժամը 11:30-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ.Բաղինյան

Անդամ՝ ---------- Տ.Ղուկասյան

---------- Շ.Իսախանյան

---------- Ս.Զաքոյան

---------- Գ.Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան